

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՆՐԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը.

1991 թվականի սեպտեմբերից 21-ից սկսած Հայաստանի Հանրապետությունում պարբերաբար տեղի են ունեցել մարդու իրավունքների զանգվածային խախտումներ՝ զուգակցված երկրում համակարգային և քաղաքական կոռուպցիայի երևույթների կայուն առկայությամբ, որպիսի հանգամանքն ընդգծվել է մի շարք միջազգային զեկույցներում:

2018 թվականին Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունները հետևանք էին այս երևույթների արդյունքում հասարակության մեջ կուտակված անարդարության զգացման, որը կարող է հաղթահարված համարվել միայն իրավունքների խախտման վերաբերյալ տեղեկություններ հավաքագրելու, տուժողների խախտված իրավունքները, հնարավորինս վերականգնելու, անցյալին գնահատական տալու և ինստիտուցիոնալ բարեփոխումներ կատարելու, որպեսզի բացառվի հետագայում որևէ իրավիճակում նման երևույթների կրկնությունը:

Ըստ այդմ, 2022 թվականի հուլիսի 21-ին հաստատված դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ (այսուհետ՝ Ռազմավարություն) ամրագրվել է անցումային արդարադատության գործիքներ կիրառելու անհրաժեշտությունը, մասնավորապես ամրագրվեց, որ Անկախությունից ի վեր Հայաստանում տեղի ունեցած իրավունքների խախտումների դեպքերի ուսումնասիրության և դրանց վերաբերյալ տեղեկությունների հավաքման համար անհրաժեշտ է ձևավորել կառույց, որն իր հերթին, պետք է օժտված լինի այնպիսի գործառույթներով, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրել և քարտեզագրել

1991 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած մարդու իրավունքների զանգվածային և պարբերաբար կատարված խախտումների դեպքերը և դրանց պատճառները, առաջարկներ ներկայացնել բացահայտված խախտված իրավունքները վերականգնելու և պաշտպանելու, ինչպես նաև դրանց կրկնությունը բացառելու համար:

Ռազմավարությունից բխող գործողությունների ծրագրի համաձայն՝ փաստահավաք գործառույթներ իրականացնող կառույցը կարող է ստեղծվել գործող մարմնի շրջանակներում՝ որպես առանձին ստորաբաժանում:

2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների արդյունքում 2018 թվականին ստեղծվեց Հանրային խորհուրդ, որը իր գործունեությունն իրականացնում է որպես Կառավարության խորհրդակցական մարմին: Հանրային խորհրդի գործունեության հիմնական խնդիրներն են հասարակության տարբեր շերտերի շահերը ներկայացնելը, պետական կառավարման գործընթացներին քաղաքացիական հասարակության մասնակցությանը նպաստելը, Կառավարության, պետական կառավարման համակարգի մարմինների և քաղաքացիական հասարակության ինստիտուտների միջև փոխադարձ վստահության, երկխոսության և գործընկերային հարաբերությունների ձևավորմանը նպաստելը, ինչպես նաև ընդհանուր ազգային խնդիրների շուրջ Հայաստանի և սփյուռքի հայության ջանքերի համախմբմանն իր գործառույթների շրջանակներում աջակցելը:

Քանի որ փաստահավաք գործունեությունը մոտ է Հանրային խորհրդի ծավալած գործունեությանը, առավել նպատակահարմար է փաստահավաք գործունեություն իրականացնելու լիազորությունը վերապահել Հանրային խորհրդի կազմում նրա կողմից ձևավորվող առանձին հանձնաժողովի՝ Փաստահավաք հանձնաժողովին:

Մասնավորապես, ներկայումս «Հանրային խորհրդի մասին» ՀՀ օրենքի համաձայն Հանրային խորհրդի գործառույթներն են վարչապետի առաջարկությամբ կամ սեփական նախաձեռնությամբ՝

- հանրային լուսմներ կամ քննարկումներ կազմակերպելը՝ հասարակական հետաքրքրություն ներկայացնող, ինչպես նաև հասարակական կյանքի կարևորագույն ոլորտներին առնչվող հարցերի վերաբերյալ,

- գործող օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի, պետական ծրագրերի, ռազմավարությունների, հայեցակարգերի և դրանց նախագծերի հասարակական փորձաքննություն իրականացնելը և եզրակացություն տալը, ներառյալ՝ դրանցում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին առաջարկությունները,

ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ՝

- հանրային հնչեղության այլ հարցերի, ինչպես նաև հանրության բարձրացրած հիմնահարցերի վերլուծություններ իրականացնելը և եզրակացություն տալը,

- հասարակության տարբեր շերտերի հետաքրքրությունների և շահերի միջև առկա հակասությունների բացահայտման նպատակով, կարևորելով սոցիալական գործընկերների միջև սոցիալական երկխոսությանն աջակցելը, խորհրդակցություններ կամ քննարկումներ կազմակերպելը բոլոր շահագրգիռ կողմերի մասնակցությամբ՝ արդյունքների մասին տեղեկացնելով Կառավարությանը:

Բացի այդ, Կառավարության և հասարակության միջև արդյունավետ երկխոսության կայացմանը նպաստելու նպատակով Հանրային խորհուրդն իր նախաձեռնությամբ, յուրաքանչյուր դեպքում գնահատելով անհրաժեշտությունը, կարող է դիմել վարչապետին՝ հանրային լուսմներ և քննարկումներ կազմակերպելիս Կառավարության ներկայացուցչի մասնակցությունն ապահովելու խնդրանքով:

Անհրաժեշտ է ընդգծել նաև, որ Հանրային խորհուրդը կարող է անդամակցել համապատասխան միջազգային հասարակական կազմակերպություններին և իրականացնել միջազգային համագործակցություն՝ իր գործունեությանն առնչվող ոլորտի մարմինների հետ:

Ինչպես կնկատենք ստորև, իր գործունեությամբ պայմանավորված՝ Փաստահավաք հանձնաժողովը ներկայացնելու է հասարակության տարբեր շերտերի շահերը, գործունեությունն իրականացնելու է քաղաքացիական հասարակության ակտիվ ներգրավմամբ ու մասնակցությամբ և ուսումնասիրելու է բնույթով այնպիսի հարցեր, որոնք կարող են ներառվել ընդհանուր ազգային խնդիրների շրջանակում:

Այսպես, Փաստահավաք հանձնաժողովի գործունեությունն առավելապես ուղղված է լինելու՝

1) Հայաստանի Հանրապետությունում 1991 թվականի սեպտեմբերի 21-ից մինչև 2023 թվականը ներառյալ ժամանակահատվածի ընթացքում տեղի ունեցած՝ սույն հոդվածով նախատեսված դեպքերի և իրադարձությունների շրջանակում կամ դրանց հետևանքով կատարված՝ մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը,

2) պատմական, քաղաքական, տնտեսական, իրավական համատեքստում խախտումների կատարման առիթների, պատճառների, հանգամանքների բացահայտմանն ու նկարագրմանը,

3) խախտումների կատարմանը նպաստած (նպաստող) կամ դրանց կատարման պատճառ հանդիսացած ինստիտուցիոնալ մեխանիզմների, համակարգային կապերի, խախտումների կատարմանը նպաստած և դրանց կատարման գործընթացում ներգրավված, այդ թվում՝ էական ու որոշիչ մասնակցություն կամ ազդեցություն ունեցած անձանց, կազմակերպությունների, մարմինների հնարավոր շրջանակի բացահայտմանը,

4) ինստիտուցիոնալ բարեփոխումների և այլ առաջարկությունների ներկայացմանը՝ ուղղված հնարավոր խախտումների կրկնությունը բացառելուն, դրանց արդյունքում տուժած անձանց իրավունքների պաշտպանությանը, անձանց խախտված իրավունքների վերականգմանը և փոխհատուցման եղանակների ու միջոցների սահմանմանը:

Իրականացնելով համեմատական վերլուծություն նոր ձևավորվող Փաստահավաք հանձնաժողովի համար նախատեսվող գործառույթների և «Հանրային խորհրդի մասին» օրենքով Հանրային խորհրդին վերապահված գործառույթների միջև, կարող ենք գալ այն հետևությանը, որ առավել նպատակահարմար և իրատեսական է Հանրային խորհրդի կազմում գործող հանձնաժողովին վերապահել փաստահավաք գործառույթների իրականացման ապահովումը:

Բացի այդ, Հանրային խորհրդի ձևավորման համար հիմք է հանդիսանում Սահմանադրության ուղղակի պահանջը, ուստի փաստահավաք գործառույթներ իրականացնող մարմինը Հանրային խորհրդում ձևավորելու դեպքում կերաշխավորվի նաև փաստահավաք գործունեության կազմակերպման ապահովումը սահմանադրական մարմնի միջոցով:

Այսպես, Փաստահավաք գործունեություն իրականացնող մարմինը՝ միջազգային պրակտիկայում առավել ընդունված է անվանել ճշմարտության, կամ որոշ դեպքերում նաև՝ հաշտեցման կառույց:

Նման կառույցները ոչ դատական մարմիններ են, որոնց ստեղծման հիմնական նպատակն է ուսումնասիրել և բացահայտել անցյալում կատարված իրադարձությունները, հայտնաբերել դրանց պատճառները և հետևանքները: Այդ կառույցները իրենց զեկույցների և առաջարկությունների միջոցով նպաստում են դատական կարգով իրականացվող հետապնդումների և հատուցումների արդյունավետ իրականացմանը, օժանդակում հասարակության մեջ լռության և անվստահության մթնոլորտի հաղթահարմանը, ինչպես նաև ներկայացնում

ինստիտուցիոնալ բարեփոխումների վերաբերյալ առաջարկներ նոր բռնությունները կանխելու համար:

Նման կառույցների ստեղծման պատմությունը վկայում է, որ մարդու իրավունքների ոտնահարման լուրջ խախտումների քարտեզագրումը և փաստագրումը կարևոր քայլ է ճշմարտության իրավունքի իրացման համար:

Աշխարհի տարբեր երկրներում և տարբեր ժամանակահատվածներում ստեղծվել և գործել են (գործում են) 40-ից ավելի նման կառույցներ, որոնք ընդգրկում են բավականին լայն աշխարհագրություն: Այդ կառույցներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունները, որոնց սակայն միավորում են բազմաթիվ ընդհանուր գծեր և ուղղություններ, որոնք ուսումնասիրվել և ամփոփվել են տարբեր միջազգային կառույցների, հատկապես՝ Անցումային արդարադատության միջազգային կենտրոնի (International Center for Transitional Justice) զեկույցներում:

Այսպես, օրինակ, Հարավաֆրիկյան Հանրապետության Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը (The South African Truth and Reconciliation Commission (TRC) ստեղծվել էր՝ ապարտեիդի հետևանքով մարդու իրավունքների համակողմանի խախտումներին և բռնություններին անդրադառնալու համար:

Քենիայի Ճշմարտության և Հաշտեցման հանձնաժողովը ստեղծվել էր՝ ուսումնասիրելու մարդու իրավունքների խախտումներն ու չարաշահումները, կոռուպցիոն բնույթի խախտումները, հողերի զավթումները և սոցիալական, ինչպես նաև տնտեսական իրավունքների խախտումները սկսած Քենիայի անկախությունից ի վեր՝ 1962 թվականից:

Թունիսի ճշմարտության և հաշտեցման հանձնաժողովները ևս ձևավորվել էին որպես անցումային արդարադատության հաստատություններ, որոնք զբաղվելու էին անձանց փոխհատուցումների, կոռուպցիայի և մարդկանց իրավունքների խախտումների ուսումնասիրություններով, ինչպես նաև ինստիտուցիոնալ բարեփոխումների վերահսկողությամբ: Ֆիլիպիններում 2010

թվականին ևս ձևավորվել էր ճշմարտության հանձնաժողով, որը զբաղվելու էր կոռուպցիայի դեպքերի ուսումնասիրություններով: Նման կառույցներ ստեղծվել են նաև Վրաստանում, որտեղ պետք է ուսումնասիրվեին արդարադատության ընթացքում թույլ տրված սխալները, Լիբիայում, Չիլիում՝ մարդու իրավունքների խախտումների դեպքերը բացահայտելու համար և մի շարք այլ երկրներում:

Քննարկվող կառույցների էության բացահայտման համար հարկ է անդրադառնալ դրանց խնդիրներին, բնութագրական գծերին, իրավասությունների շրջանակին և լիազորություններին:

Նրանց հիմնական խնդիրներն են՝

- փաստերի պարզումը և պարզաբանումը,
- տուժողների իրավունքների պաշտպանությունը, ճանաչումը, վերականգնումը,
- դրական սոցիալ-քաղաքական փոփոխությունների իրականացումը:

Հիմնական բնութագրական գծերն են՝

1) քրեական արդարադատությանը լրացնող ինստիտուտ է

Հարկ է նկատի ունենալ, որ նման կառույցները արդարադատության մարմիններ չեն: Նրանք քրեական պատասխանատվություն չեն սահմանում, պատժամիջոցներ չեն կիրառում: Եթե նրանք ձեռք բերեն հետաքննության համար օգտակար ապացույցներ, ապա դրանք կարող են աջակցել դատարանների աշխատանքին:

2) կենտրոնացած է մարդու իրավունքների հիմնարար խախտումների բացահայտման վրա

Պատմականորեն, ճշմարտության հանձնաժողովները ուղղված են եղել մարդու ֆիզիկական և հոգեկան բռնությունից և այլ ծանր հանցագործություններից պաշտպանությանը, սակայն ժամանակի ընթացքում նրանց դերն ընդլայնվել է՝ ներառելով նաև տնտեսական հանցագործությունները և կոռուպցիան՝ որպես ավտորիտար ռեժիմի երևույթներ:

3) ընդգրկում է խախտումների երկար ժամանակահատված

Ի տարբերություն խորհրդարանական քննիչ հանձնաժողովների, ճշմարտության կառույցների իրավազորությունը տարածվում է բավականին լայն ժամանակահատվածի դեպքերի վրա, ինչը հնարավորություն է տալիս հանձնաժողովներին բացահայտել պատմականորեն արմատավորված համակարգային խախտումները:

Նրանց իրավասությունը (մանդատը) ներառում է.

- խախտումների շրջանակը.

Օրինակ՝ Պերուի նմանատիպ կառույցի մանդատը ներառում էր՝

ա) սպանություններ և առևանգումներ,

բ) բռնի անհետացումներ,

գ) խոշտանգում և այլ կոպիտ խախտումներ,

դ) բնիկների և Անդյան համայնքների կոլեկտիվ իրավունքների խախտումներ, ե) այլ հանցագործություններ և մարդու իրավունքների կոպիտ այլ խախտումներ:

- խախտումների ժամանակահատվածը.

Խախտումներն ընդգրկող ժամանակահատվածի առումով տարբեր կառույցներ հիմք են ընդունել մինչև 40 տարվա վաղեմության ժամանակահատվածը, որոշները՝ նույնիսկ մինչև մի քանի շաբաթվա: Երկար ժամանակահատվածի ուսումնասիրությունները բավականին բարդ գործընթացներ են, ինչը պահանջում է բավարար ռեսուրսներով ապահովվածություն այդ ուսումնասիրությունները պատշաճ իրականացնելու համար:

- խախտումների սուբյեկտները

Վաղ շրջանի նմանատիպ հանձնաժողովները, օրինակ՝ Արգենտինայի Անհետացածների հանձնաժողովը, կենտրոնացել էր միայն պետական պաշտոնյաների կողմից կատարված չարաշահումների (խախտումների) վրա: Այնուամենայնիվ, հետագա հանձնաժողովները կարևորել են հասարակությանը

վնաս պատճառած բոլոր խախտումների հետաքննության անհրաժեշտությունը, լինի դա կատարված պետական իշխանության կամ այլ սուբյեկտների կողմից կատարված, այդ թվում՝ հակակառավարական ուժերի գործողությունները:

- խախտումների աշխարհագրությունը

Բոլոր նմանատիպ կառույցները իրենց ուսումնասիրությունները կենտրոնացրել են այն պետության տարածքում, որտեղ հիմնվել է այն: Այնուամենայնիվ, շատ խախտումներ և չարաշահումներ կարող են ընդգրկել նաև այլ երկրների տարածքները կամ դրանցում ներգրավված լինեն նաև այլ երկրների քաղաքացիներ: Ուստի կարող են լինել դեպքեր, երբ այդ կառույցների իրավասությունների շրջանակը պետք է ներառի այլ երկրների հետ հնարավոր համագործակցություն հետաքննությունների իրականացման հարցերում:

Նրանց լիազորությունները:

Այդպիսի կառույցները, ընդհանուր առմամբ, օժտված են եղել հետևյալ լիազորություններով՝

- 1) հարցաքննել յուրաքանչյուրի՝ ով կարող է տրամադրել քննվող փաստերի վերաբերյալ տեղեկատվություն,
- 2) համագործակցել պետական մարմինների հետ,
- 3) իրականացնել անհրաժեշտ այցելություններ,
- 4) կատարել հարցումներ,
- 5) իրականացնել հետախուզում և առգրավում,
- 6) վկաների պաշտպանությանն ուղղված լիազորություններ,
- 7) կազմել զեկույցներ:

Այսպես, օրինակ, Լիբիայի Անցումային արդարադատության մասին օրենքի 7-րդ հոդվածը, ամրագրելով Փաստահավաք և հաշտեցման հանձնաժողովների ձևավորման հնարավորությունը և իրավասության շրջանակները, ի թիվս այլնի սահմանել է, որ հանձնաժողովը՝

- իրականացնում է փաստերի ուսումնասիրություն՝ կապված մարդու իրավունքների կոպիտ և պարբերական խախտումներին առնչվող իրադարձություններին, և որոշում է այդ խախտումներում ներգրավված անձանց ինքնությունը,
- նախորդ դարաշրջանում կատարված մարդու իրավունքների կոպիտ խախտումների բնույթի, պատճառների և հանգամանքների մասին ամբողջական տեղեկատվություն (զեկույց) է ներկայացում,
- համագործակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ,
- միջոցներ է ձեռնարկում Լիբիայից տարհանված քաղաքացիներին վերադարձնելու, նրանց արժանապատիվ կյանք ապահովելու, նրանց իրավունքների պաշտպանության, ցանկացած բնույթի խտրականության բացառման ուղղությամբ,
- որոշումներ է կայացնում տուժածներին համապատասխան փոխհատուցման տրամադրելու մասին:

Նրանց գործունեության ժամկետները:

Այն ձևավորվում է որոշակի ժամկետով գործունեություն իրականացնելու համար: Ընդ որում, նման կառույցի գործունեության դադարման երեք մոդել է գործում՝ գործունեությունը դադարում է օրենքով սահմանված ժամկետը վրա հասնելով, եզրափակիչ զեկույցի հրապարակմամբ կամ զեկույցի հիման վրա ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացմամբ:

Հատկանշական է, որ շատ երկրներում ընդունված է գործունեության սահմանված ժամկետը երկարաձգելու հնարավորության ընձեռումը: Այսպես, օրինակ, Չիլիում հանձնաժողովը ձևավորվել էր վեց ամիս ժամկետով, որը կարող էր երկարաձգվել ոչ ավելի քան երեք ամսով, Վրաստանում՝ երեք տարի ժամկետով, որը պատճառաբանված և հիմնավորված միջնորդության դեպքում կարող է երկարաձգվել ևս մեկ տարով, իսկ Լիբիայում՝ չորս տարի ժամկետով

անդամների նշանակումից հետո, որը կարող է երկարաձգվել ևս մեկ տարի ժամկետով:

Միաժամանակ, հաշվի առնելով Հանրային խորհրդի կառուցվածում իրականացվող փոփոխություններն ու ներկայումս պրակտիկայում հանդիպող՝ խորհրդի կազմավորման գործընթացում առկա տարընակլումները, անհրաժեշտություն է առաջացել նաև փոփոխություններ իրականացնել Հանրային խորհրդի կազմավորման և գործունեության ժամկետների վերաբերյալ կարգավորումներում:

2. Առաջարկվող կարգավորման բնույթը

««Հանրային խորհրդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին օրենքի»» նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) սահմանվել են՝

1) Հանրային խորհրդի շրջանակներում գործող Փաստահավաք հանձնաժողովի *ստեղծման և գործունեության նպատակներն ու սկզբունքները*, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետությունում Փաստահավաք հանձնաժողովի ստեղծումը ուղղված է նախևառաջ 1991 թվականի սեպտեմբերից մինչև 2023 թվականը ներառյալ տեղի ունեցած՝ դեպքերի և իրադարձությունների շրջանակում կամ դրանց հետևանքով տեղի ունեցած՝ մարդու իրավունքների հիմնարար և պարբերական խախտումների վերաբերյալ փաստերի հավաքագրմանը և ուսումնասիրմանը, որը պետք է գործի հետևյալ սկզբունքների հաշվառմամբ՝ օբյեկտիվություն և անկողմնակալություն, քաղաքական չեզոքություն, կոլեգիալություն, հանրային հաշվետվողականություն և թափանցիկություն, համագործակցություն.

2) Փաստահավաք հանձնաժողովի *իրավասությունների շրջանակը և լիազորությունները*, մասնավորապես՝ Փաստահավաք հանձնաժողովի կողմից ուսումնասիրվող դեպքերը և իրադարձությունները պետք է ներառեն՝

ա. համապետական և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների և հանրաքվեների կազմակերպում և անցկացում,

բ. հետընտրական գործընթացներում տեղի ունեցած քաղաքական հետապնդումներ,

գ. հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարումներ,

դ. անձանց սեփականության իրավունքից զրկելու այլ դրսևորումներ,

ե. ոչ մարտական պայմաններում զինձառայողների մահվան դեպքեր,

զ. հավաքների ազատության իրավունքի խախտումների դեպքեր:

Թվարկված դեպքերի ուսումնասիրության համար Փաստահավաք հանձնաժողովը լիազորված է անձից հայցել դեպքերի և իրադարձությունների տեղեկություններ, իրավասու մարմնի համաձայնությամբ կազմակերպել այցելություններ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, դրանց ստորաբաժանումների գտնվելու վայրեր, ցանկացած պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնից կամ դրանց պաշտոնատար անձանցից օրենքով պահպանվող գաղտնիքի վերաբերյալ օրենսդրության սահմաններում հայցել դեպքերին, իրադարձություններին և խախտումներին առնչվող անհրաժեշտ նյութեր ու փաստաթղթեր՝ անկախ նյութական կրիչի ձևից և տեսակից, ծանոթանալ քրեական, քաղաքացիական, վարչական և կարգապահական իրավախախտումների վերաբերյալ այն գործերին, որոնց վերաբերյալ դատավճիռները, վճիռները և որոշումներն օրինական ուժի մեջ են մտել, ինչպես նաև այն նյութերին, որոնց կապակցությամբ մերժվել է այդ գործերի հարուցումը և իրականացնելու այլ գործողություններ:

3) Փաստահավաք հանձնաժողովի կազմավորման կարգը և կառուցվածքը, անդամներին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ Փաստահավաք հանձնաժողովը գործելու է մինչև իր եզրափակիչ զեկույցի հրապարակումը, որի համար սահմանված է երկու տարի ժամկետ (որը ոչ ավելի, քան մեկ տարի

ժամկետով կարող է երկարաձգվել), իսկ նրա անդամները ընտրվելու են Հանրային խորհրդի կողմից.

4) *Փաստահավաք հանձնաժողովի աշխատանքի կազմակերպման և գործունեության կարգը*, նախատեսվում է իրականացնել նիստերի միջոցով.

5) *Փաստահավաք հանձնաժողովի կողմից զեկույցների կազմման և հրապարակման կարգը*, մասնավորապես՝ Նախագծով նախատեսվում է, որ Փաստահավաք հանձնաժողովը իր գործունեության արդյունքում կազմելու է եզրափակիչ զեկույց, որը պարունակելու է խախտումների նկարագրությունը և Փաստահավաք հանձնաժողովի եզրակացություններն ու առաջարկությունները, իսկ ընթացիկ աշխատանքների ամփոփման և հրապարակայնության ապահովման նպատակով նախատեսվում է միջանկյալ զեկույցներ ներկայացնելու կարգը: Փաստահավաք հանձնաժողովի եզրափակիչ զեկույցը Հանրային խորհրդի հաստատումից հետո ներկայացվելու է Կառավարություն:

Նախագծով հստակեցվել են նաև Հանրային խորհրդի կազմավորման և գործունեության ժամկետները:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները

Նախագիծը մշակվել է Արդարադատության նախարարության կողմից:

4. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է երաշխավորել Հանրային խորհրդի կողմից Փաստահավաք հանձնաժողովի տեսքով փաստահավաք գործունեություն իրականացնող հանձնաժողովի կազմավորումը և գործունեության իրականացումը, որի միջոցով հնարավոր կլինի անդրադառնալ և անցյալում տեղի ունեցած իրադարձություններին և միջոցներ ձեռնարկել անձանց խախտված իրավունքների պաշտպանության ուղղությամբ:

5. Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ.

Նախագծի ընդունումը բխում է «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2022-2026 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի N 1441-Լ որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման Հավելված 2-ով սահմանված Նպատակ 2-ի Գործողություն 1-ից: